ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը:**

1) մեղմ-րեն, մեղմ-ռոր, միջ-ռեական, գիշեր-թիկ
2) շա-անակագույն, զի-զա-աձև, դրասան-, անհար-ի
3) ատաղ-ագործ, ան-կություն, պախուր-, վերամբար-
4) կմա-ք, տա-տակ, ու-տատեղի, հա-ճապակի

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) կաս(կարմիր), ամեն(մի), ծայրից(ծայր)
2) վառ(դեղին), դեմ(հանդիման), Սանկտ(Պետերբուրգ)
3) ի(զեն), ըստ(էության), վեց(հարյուրամյա)
4) դուռ(դռան), հինգ(ճյուղանի), (առ)այն

3 **Ո՞ր շարքի բոլոր բաղադրյալ հատուկ անուններում է բաղադրիչներից միայն մեկը գրվում մեծատառով:**

1) ՊԱՐՍԻՑ ԾՈՑ, ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ, ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
2) ԲԵՐՄՈՒԴՅԱՆ ԵՌԱՆԿՅՈՒՆԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ, ՀՌՈԴՈՍԻ ԿՈԹՈՂ
3) ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔ, ՔԵՈՓՍԻ ԲՈՒՐԳ, ՏՐԴԱՏ ԵՐԲՈՐԴ
4) ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ, ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ՀԱՂԹԱՆԱԿԻ ԿԱՄՈՒՐՋ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:**

1) սպառազեն, քրմապետ, թրջել, ամրոց
2) ավշանյութ, մրցել, եղջերվամիս, դեռափթիթ
3) ապավինում, օժտվածություն, շիրմաքար, պղծել
4) երկվություն, մատենագիր, լցոնել, հեռավար

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում (բառաձևերում) է գաղտնավանկի ը-ն ճիշտ տեղադրված:**

1) կն(ը)կատի, համ(ը)ռանալ, չընկ(ը)ռկել
2) դռ(ը)նբաց, խառ(ը)նվածք, հանգց(ը)նել
3) քն(ը)նվել, կ(ը)նճռոտ, խճ(ը)ճվել
4) կ(ը)ռկնել, ձեռ(ը)նտու, տ(ը)ռտմել

6 **Ձախ շարքի բառերից յուրաքանչյուրը հոմանիշ է աջ շարքի բառերից մեկին: Լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. բանսարկություն	1. գորով
բ. խաթարում	2. քինախնդրություն
գ. հիշաչարություն	3. զրպարտանք
դ. խանդաղատանք	4. աղավաղում
ե. տարակուսանք	5. երկբայություն

1) ա-2, բ-1, գ-5, դ-3, ե-1
2) ա-3, բ-4, գ-2, դ-1, ե-5
3) ա-2, բ-1, գ-4, դ-3, ե-5
4) ա-3, բ-4, գ-5, դ-2, ե-1

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:**

1) վճարունակ, միջնորմ, ակնածանք
2) պարփակել, հետաքննիչ, խոսքարվեստ
3) անհեռատես, մեղմահնչյուն, տարկետում
4) բնօրրան, լռակյաց, շրջանագիծ

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կա միևնույն ածանցը:**

1) ձգան, կայան, կծան, մկան
2) քարոտ, արոտ, յուղոտ, խավոտ
3) մարմնեղ, լուսեղ, հոնեղ, հյութեղ
4) գողոն, գործոն, թափոն, քանոն

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերում ինքնուրույն գործածություն *չունեցող* արմատ կա:**

1) սիրասուն, անողջախոհ, հիանալի
2) չունևոր, խոսափող, քաջազն
3) մարդատյաց, հեղաշրջում, խցիկ
4) կառապան, ցնծագին, լուսաշող

10 **Ո՞ր տարբերակում հականիշներից կազմված բառազույգ կա:**

1) պղտոր-ականակիր, հեգ-աշխատասեր
2) կարծր-ողորկ, թոթովել-վանել
3) ունևոր-զերծ, հաստատել-հերկել
4) ճշմարիտ-թույր, անբասիր-արատավոր

11 **Ո՞ր նախադասության մեջ կրկնադիր շաղկապ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ծով կար նրա մտքում և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով մի գլուխ մազերը կարճ կտրած մերթ երկարազգեստ մի կնոջ թիկունքին երկար ծամեր:
2) Կարծում էր կգրի մի կարճ պատմվածք կամ մի ակնարկ կամ էլ որոշ ժամանակով գրելը կհետաձգի մինչև բավարար նյութ կհավաքվի ավելի ծավալուն գործի համար:
3) Աշնան խաղաղ օրերին նրան հաճելի էին և սիմինդրի տերևների խշշոցը և վազերի օրորը և հնձանի դռնակի երգը:
4) Ինձ պատմել են որ այնտեղ էլ ոչ մի չարխ չի պտտվում ոչ մի կուժ չի շինվում:

12 **Ո՞ր նախադասության մեջ գոյականաբար գործածված ածական կա:**

1) Կակաչի կարմիր թևին Մի կարմիր զատիկ է նստել, Կակաչի սև սրտի մեջ Սև զավթիչ բողբոջ է նստել:
2) Աչքդ միշտ կուշտ կմնա, Հոգիդ՝ գոհ քեզ հասած քչից, Բոլորին բաժին կտաս Քո մաքուր, մաքրված խղճից:
3) Խուլ գյուղեր կային անտառների խորքում, բարձր-բարձր լեռների լանջերին և չափազանց խոր ձորերում:
4) Հանդիպելիս թող մոռանան Ամեն տեսակ ցավ ու մորմոք Ինձ պես այրվածն ու քեզ նման Տառապածը:

13 **Ո՞ր նախադասության մեջ և՛ չեզոք, և՛ ներգործական սեռի բայեր կան:**

1) Նա հանեց ծիրանի փողը, որով նվագել էր կապույտ լեռների երգը:
2) Եղան բռնություններ, թշնամին ձորերով բարձրացավ մինչև նրանց խեղճ խրճիթները:
3) Ամայի դաշտում նստեմ միայնակ, Մեռնող հուշերս փայփայեմ ու լամ:
4) Անձրևաջուրը ծառերի չոր ճյուղերը տարել էր, հասցրել մինչև գետի բերանը:

14 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Նա վեր կացավ, մոտեցավ չարխին, և ոտքերն սկսեցին շարժվել համաչափ ռիթմով, ինչպես տարիներ առաջ:
2) Կապույտ երկնքում՝ արևի կողքին, շողում են սավառնակի թևերն ու մարմինը:
3) Մեղվանոցի մոտով՝ ձորի ճանապարհով, դեպի գետն իջան գյուղ եկած հովեկները:
4) Եթե փախստականները անմիջապես ճանապարհ ընկնեին, ապա ժամանակին կհասնեին քաղաք:

15 **Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ կա:**

1) Երբ նայում է, որ ափերին ես չկամ, Մոլորվում է Լորագետը ու գնում:
2) Եվ այդ հիմքի վրա ինքը քանի՞ անգամ Մտքով որմ է հանել, խոյակ ու սյուն Եվ ձևերն է դրել նոր տաճարի:
3) Ես չեմ երգելու այժմ շառաչուն Գալիքի մասին, որ գալու է դեռ:
4) Այսպես ասաց հայոց ահեղ արքան, Ապա իջավ գահից ոսկեդրվագ:

16 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Պետք է ասեմ մի բան, որ կթվա արտառոցից արտառոց:
2) Գիտեր, որ իրեն օրեր շարունակ տանել-բերելու են:
3) Նա արդեն ձեռք էր բերել օլիմպիադային մասնակցելու իրավունք:
4) Ընկերոջը տուն գնալիս էր հանդիպել:

17 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Երկու շաբաթ շարունակ պահարանը տակնուվրա անելու արդյունքում գտածդ ընդամենը այս հին նամա՞կն էր:*
   Այն, ինչ երկու շաբաթ շարունակ պահարանը տակնուվրա անելու արդյունքում գտել էիր, ընդամենը այս հին նամա՞կն էր:
2) *Պատվիրակների՝ արքայական վրաններին հասնելուն պես հնչեցին հակառակորդի շեփորների բարձրագոչ ձայները:*
   Հենց պատվիրակները հասան արքայական վրաններին, հնչեցին հակառակորդի շեփորների բարձրագոչ ձայները:
3) *Գույնը գցած պահակը վազում էր շինության պարսպի երկայնքով՝ քիչ առաջ փախած ավազակին բռնելու հույսով:*
   Պահակը, որ գույնը գցել էր, վազում էր շինության պարսպի երկայնքով՝ քիչ առաջ փախած ավազակին բռնելու հույսով:
4) *Չնայած մերձավորների հետ համաձայն չլինելուն՝ նա փոխզիջման ուղիներ էր որոնում:*
   Թեպետ մերձավորների հետ համաձայն չէր, նա փոխզիջման ուղիներ էր որոնում:

18 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա:***

1) Այս գեղգեղանքը սիրավառ սրտի մի ամբողջ հեքիաթ էր՝ մի դյութական հեքիաթ՝ ծաղիկների բույրով ներդաշնակված:
2) Նրա ձայնը՝ խրոխտ ու ահեղագոչ, այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմաններն անցավ՝ որպես փոթորիկ:
3) Ինչպես է հորս հանդիպել, երբ և որտեղ են ամուսնացել, չգիտենք. չկան եկեղեցիներում պահպանվող պսակադրությունների մատյանները:
4) Ինչևէ, փաստն այն էր, որ պայթյունը միայն թեթևակի ցնցել էր շենքը՝ թողնելով՝ այն անվնաս մնա, բայց դժոխային մեքենայի՝ սարսափ առաջացրած պայթյունից հրդեհ էր բռնկվել:

19 **Ո՞ր տարբերակում ստորադաս նախադասությունը ստորոգելի *չէ:***

1) Ե՞րբ էր, որ նա խոստացավ գալ, շուտ գալ:
2) Այս ամենը նրանից է, որ մենք այլևս չենք նայում աստղերին:
3) Ինձ համար ամենաանտանելին այն է, որ մարդիկ նախանձում են իրար:
4) Ով ամեն օր պայքարում է ստի դեմ, իմ իդեալը նա է:

20 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Նա իսկույն հանել է տալիս Կանդիդի ձեռնաշղթաները՝ ասելով, որ դա սխալմունք է, ապա ներողություն է խնդրում, իսկ հետո երկուսին էլ ուղարկում Վենետիկ, ուր նրանց թողնում է իր եղբոր մոտ:



21 **Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Մեծ երգահանի կերպարը Սևակի վկայությամբ վաղուց է եղել բանաստեղծի ստեղծագործական որոնումների կենտրոնում:
2) Նավը հետ էր ցատկում որպեսզի նորից դիմադրի զայրացած փոթորկված օվկիանոսին:
3) Երբեմն վայրագ ալիքները քամուց խիստ գազազած ուժգին թափով բարձրացնում էին նավը իրենց բաշերի վրա:
4) Նա կլինի հաղթողը ով աչքի կընկնի հումորի սուր զգացումով:

22 **Պնդումներից ո՞րն է սխալ հայ ժողովրդական հին վիպական երգերի (վիպասանքի) վերաբերյալ:**

1) Ասացողները դրանք երգախառն պատմել են փանդիռների նվագակցությամբ:
2) Նրանցում առկա են տեղեկություններ հայերի՝ հարևան ցեղերի հետ ունեցած հարաբերությունների մասին:
3) Շնորհիվ Մովսես Խորենացու՝ մեզ են հասել ամբողջական տեսքով:
4) Հատկապես լայնորեն տարածված են եղել Գողթն գավառում:

23 **Ո՞ր պնդումը ճիշտ *չէ* «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ:**

1) Կրտսեր Մսրա Մելիքի հայրը Մեծ Միհրն է:
2) «Սասնա ծռերը» բաղկացած է չորս ճյուղից, որոնցից յուրաքանչյուրը վերնագրված է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով:
3) Մինչև Խանդութի հետ ամուսնանալը Դավիթը նշանվում է Չմշկիկ Սուլթանի հետ, ումից ծնված աղջիկն էլ հետագայում թունավոր նետով սպանում է հարազատ հորը:
4) Քանի որ Փոքր Միհրը չի կարողանում սպանել Չմշկիկ Սուլթանին և հոր վրեժը լուծել, այդ պատճառով փակվում է Ագռավաքարում:

24 **Նախադասության մեջ տեղադրման համար փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Ըստ երկրի …….. `ասպետները ……., և արքայադուստրը ……..սիրտը կտա ……..:

(1. հաղթանակել, 2. ինքը, 3. մենամարտել, 4. սովորություն)

1) սովորությամբ, պիտի մենամարտեն, իրեն, հաղթողին
2) սովորությամբ, պետք է մենամարտեն, իր, հաղթողին
3) սովորության, պիտի մենամարտեն, իր, հաղթանակողին
4) սովորության, պետք է մենամարտեն, իրեն, հաղթանակողին

25 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Լոս Անջելեսում է գտնվում աշխարհի ամենաարտառոց հուշարձաններից մեկը՝ տարօրինակ մի աշտարակ, որի շինարարությունը տևել է 33 տարի:
2. Տիտանական աշխատանք պահանջող աշտարակը նա վեր էր խոյացրել մենակ՝ իր տան հետնաբակում ձևավորելով երեք հսկա գալարասյուներ և 6-ից ավելի կից շինություններ, որոնք փայլատակում էին գունավոր ապակու 70000-ից ավելի բեկորներով, փոքրիկ սալիկներով, ծովային խեցիներով, խմորեղենի դանակներով ու ձիու պայտերով:
3. Սիմոն Ռոդիան՝ աշտարակի հանճարեղ հեղինակը, Իտալիայից ԱՄՆ գաղթած անգրագետ մի բանվոր էր՝ սևագործ աշխատանք կատարող:
4. Կառույցը, որ նույնիսկ նախագծեր ու գծագրեր չէր ունեցել, այսօր ունի պատմական հուշարձանի կարգավիճակ:

1) 4, 1, 3, 2
2) 1, 4, 2, 3
3) 1, 3, 2, 4
4) 4, 2, 1, 3

26 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

Իջավ սարյակը դաշտում. ծիլ էր կտուցին.
Շուրթիս վրա մի կանաչ տող էր թպրտում:
Կռռաց ագռավը ձորում. ձյուն էր կտուցին.
Սրտիս վրա մի ճերմակ տող էր թպրտում:

1) համեմատություն
2) փոխաբերություն
3) մակդիր
4) հանգավորում

27 **Ա. Շիրվանզադեի «Քառս» վեպի կերպարների մասին ո՞ր պնդումն է սխալ:**

1) Անտոնինա Իվանովնան, շփվելով բանվորական միջավայրի հետ, փոխում է իր կարծիքը հայերի մասին:
2) Ինժեներ Սուլյանը սիրահետում էր թեթևամիտ Մարթային:
3) Հրդեհի տեսարանում Սմբատը փրկում է ոչ միայն իր երեխաների, այլև բանվորներից մի քանիսի կյանքը:
4) Միքայելը վեպի վերջում վերափոխվում է:

28 **Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսի խոսքն է.**

«Ես ինքզինքս չէի կարծեր այն չափ մեծ մարդ, որչափ որ կը կարծե այս խմբագիրն, բայց հարկավ ան ինձմե աղեկ գիտե իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մ՚է և ուսումնական է….»:

1) Մանուկ աղայի
2) Աբիսողոմ աղայի
3) դերասանի
4) բանաստեղծի

29 **Ո՞ր պնդումը Ե. Չարենցի «Դանթեական առասպել» պոեմի վերաբերյալ ճիշտ *չէ:***

1) Պոեմում բանաստեղծը նկարագրում է պատերազմի հետքերը Կարսից մինչև Վան ընկած ճանապարհին:
2) Պոեմի կենտրոնական դեմքը ինքը՝ զինվոր բանաստեղծն է:
3) Պոեմը սկսվում է պատերազմ մեկնող երիտասարդ կամավորների ուրախ տրամադրությամբ:
4) Պոեմում կռվի որևէ դրվագ անմիջականորեն չի ներկայացվում:

30 **Ա. Բակունցի նշված պատմվածքներից որի՞ բոլոր հերոսներն են, որ հանդես *չեն* գալիս անձնանուններով:**

1) «Ալպիական մանուշակ»
2) «Մթնաձոր»
3) «Խոնարհ աղջիկը»
4) «Միրհավ»

31 **Ո՞ր ստեղծագործության ենթավերնագիրն է «Հազարամյակ մը մեզմե առաջ»:**

1) «Աբու-Լալա Մահարի» (Ա. Իսահակյան)
2) «Հարճը» (Դ. Վարուժան)
3) «Հին աստվածներ» (Լ. Շանթ)
4) «Վերք Հայաստանի» (Խ. Աբովյան)

32 **Ինչո՞ւ էր Գ. Զոհրապի «Զաբուղոն» նորավեպի համանուն հերոսը գողությամբ զբաղվում:**

1) համաքաղաքացիներից վրեժ լուծելու համար
2) ապրուստի միջոց հայթայթելու նպատակով
3) սիրած աղջկա՝ Վասիլիկի քմահաճույքներին գոհացում տալու համար
4) դժվար փորձությունները հաղթահարելու իր բուռն ցանկությունը բավարարելու համար

33 **Ընդգծվածներից որո՞նք են վաղակատար ձևաբայ:**

Ինքը երբևիցե ոչ ոքի հետ չէր 1. **խոսել** Աստծու և հավատի մասին, բայց այդ մարդիկ ուզում էին իրեն 2. **սպանել**՝ անհավատությունը պատրվակ դարձրած, և ինքը չէր էլ դիմադրում: Երբ մի կալանավոր կատաղի ոգևորությամբ նրա վրա էր **3. հարձակվել,** նրա հոնքն էլ չէր 4. **շարժվել**: Բանտի պահակը բարեբախտաբար 5. **կարողացել** էր ժամանակին 6. **կանգնել** երկուսի միջև: Այլապես արյուն էր 7. **թափվելու**:

34 **Ո՞ր բառերի բաց թողած տեղում *չի* գրվում *յ:***

1. միմ-այն, 2. պո-եմ, 3. ուխտադրու-ժ, 4. աղյուս-ակ, 5. բար-ացակամ, 6. Միքա-ել, 7. հաստաբու-ն, 8. գու-ժկան

35 **Ո՞ր բառերն ունեն ընդհանուր արմատ:**

1. բարգավաճ, 2. արգելք, 3. անարգանք, 4. արգանակ, 5. հարգել, 6. մեծարգո, 7. համակարգել, 8. արգասավոր

36 **Ո՞ր նախադասություններում գոյական *չկա:***

1. Այսպիսով, փոքր առ փոքր ինձ հաջողվեց անցորդի ուշադրությունը գրավել:
2. Վաղուց ոչնչից չեմ դժգոհում, այլ համակերպվում եմ ամենքի հետ:
3. Նա նկատեց, որ մեծ գրողի ասածները հիշում են բոլորը:
4. Մտածում էր՝ ուր գնա, ում դիմի այդ խնդրանքով:
5. Յուրաքանչյուր ոք կարող է կասկածել, բայց երբեք չհերքել ուրիշներին:

37 **Ո՞ր նախադասություններում միջոցի անուղղակի խնդիր *չկա:***

1. Ու խավարն անհուն զգվանքով թեթև Ծավալվեց շուրջս ու փռվեց վրաս:
2. Ես չար հոսանքով մղված եմ հեռուն, Եվ անվերադարձ փակված է ուղին:
3. Սառն աչքերով եմ նայում ես հեռվում Մեռած օրերիս ցնորքին հիմա:
4. Դառը մենության ու անհուսության մթին վիհերում Իմ թույլ սիրտը կամեցա քաղցր հուշով ամոքել:
5. Ուզեցի, որ դու պայծառ ու մաքուր լույսերով անշեջ Եվ խորհուրդներով դյութես վերստին սիրտս տարագիր:

38 **Ո՞ր թվերի տեղում բութ պիտի դրվի:**

Տարօրինակ բան(1) արծիվը քաղաք մտավ նստեց Մլեհի դեմ դիմաց(2) որձաքարի վրա: Ումից է հալածվել որ թշնամուց(3) ոչ ոք չգիտեր: Մլեհը իմանալով(4) ինչքան երկար է ապրում արծիվն ու ինչքան շատ բան է հիշում(5) հասկացավ որ հզոր թռչունի թշնամին հիշողությունն է: Արծիվը թևածեց Հայոց լեռնաշխարհի կողմը ու ինքը հիշեց հեքիաթի տղային որ արծվի թևերին նստած(6) սավառնում է դեպի իր աշխարհի(7) մանկության լույսով ողողված ափը(8) արևոտ լուսավոր ջերմ:

39 **Բառակապակցություններից քանի՞սն են գործածվում միայն դարձվածային իմաստով:**

սառույցը շարժվել, թակարդն ընկնել, ջուրը գցել, օր ու արև չտալ, աչքը վախեցնել, գլուխ խոնարհել, կրակի հետ խաղալ, ձեռք մեկնել

40 **Տրված բառերից քանիսո՞ւմ արմատի հնչյունափոխություն կա:**

կորստյան, սնամեջ, պատմագիր, դիտանցք, կտցահարել, երգչախումբ, սիզախոտ, միջանցք

41 **Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում ներքին հոլովման:**

քույր, խաչեղբայր, դերանուն, ուսուցում, գերություն, հենասյուն, աշուն, մանուկ

42 **Նախադասություններից քանիսո՞ւմ հիմունքի կամ զիջման պարագա կա:**

- Հայրս, ըստ իր սովորության, չհամբուրեց ինձ:
- Այդ լռին ու ինքնամփոփ մարդը, չնայած թիկնեղ լինելուն, շատ փխրուն էր:
- Կյանքի դաժանությունը ստիպել էր նրան բռնել միակ որդու ձեռքը և հակառակ իր կամքին՝ գցել անհայտության ծովը:
- Հորս անսպասելի սնանկությունը մեզ վերցրել էր թանկագին գորգերից և տարել հակառակ ուղղությամբ:
- Բայց ես, ի հեճուկս կյանքի դառնությունների, գտա իմ աշխատանքը:

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ շարադասության սխալ կա:**

- Երբ մարդ այնպիսի պայմաններում է (ջրի տակ կամ թունավոր ծխով շրջապատված), որ օդ շնչել չի կարողանում, որոշ ժամանակ ստիպված է շունչը պահել. մարդու դեպքում շունչ պահելու ռեկորդը հավասար է 7 րոպե 1 վայրկյանի:
- Առաջիկա Մոսկվայի դրամանիշների համաշխարհային մրցույթում կներկայացվեն նաև հայկական ցուցանմուշներ:
- Երվանդ Քոչարի Երևանի թանգարանի ցուցանմուշներից շատերը ժամանակակից եռաչափ նկարների նախանմուշներ կարող են համարվել:
- Տարիներ առաջ Իջևանը շքեղ բնության մեջ ծվարած աննշան մի բնակավայր էր՝ հայտնի միայն այստեղով անցնող ճանապարհորդներին:
- Դիլիջանի բնության գեղատեսիլ վայրերից է քաղաքից ոչ հեռու՝ սաղարթախիտ անտառի խորքում գտնվող Պարզ լիճը, որի մոտակայքում շատ են ճարտարապետական կոթողները:

44 **Հատվածներից քանիսի՞ դիմաց է սխալ նշված, թե որ հայերենով է այն:**

- Եկին ու խապար բերին,
  թե՝ ելեր քո եարն ու կու գայ:- *միջին հայերեն*
- Ես այգերով ու ցայգերով
  Հաճախ մենակ կ'անրջեմ
  Անհնարին, երկնագորով
  Սեր մը, որուն տերը չեմ: - *արևմտահայերեն*
- Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
  Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթենկան: - *միջին հայերեն*
- Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ
  Ծաւալանայր յառաւօտուն: - *գրաբար*
- Գերության շղթան ինձ զգալի չէր,
  Եվ ոչ բռնության անգութ ճանկերը.
  Ձեզանից հետո ծանրացան նոքա,
  Ո՜հ, անիծում եմ ես այն օրերը: - *արևմտահայերեն*

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Անորոշ դերբայով կարող է ձևավորվել բայական անդեմ նախադասություն:
2. Ձևաբայերով կազմվում են միայն սահմանական եղանակի ժամանակաձևեր:
3. Անորոշ, համակատար և ենթակայական դերբայները գործածվում են ինքնուրույն և *եմ* օժանդակ բայի հետ դիմավոր ձևեր չեն կազմում:
4. Հարակատար դերբայը փոխանվանաբար գործածվելիս հանդես է գալիս գոյականին բնորոշ պաշտոններով:
5. Ձևաբայերով կազմվում են պարզ և բաղադրյալ դիմավոր ժամանակաձևեր:
6. Բոլոր կանոնավոր բայերի անկատար ձևաբայը ունի նույն վերջավորությունը:

Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա:***

1) տաքդեղ, դաստիարակ, հղբանալ, կերկերուն
2) լուսատտիկ, նախկին, ժպիրի, ոստրէ
3) մտածածին, հինավուրց, քողտիկ, սրախողխող
4) հայթայթել, տարրալուծել, դշխուհի, գլուխկոնծի

47 **Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:**

1) ՅԾԿ- 6560
2) ՎՅԳ-3330
3) ՆԾ-460
4) ՌՋՉ-1980

48 **Ո՞ր շարքում *ու* ձայնավորի հնչյունափոխություն ունեցող բառ *չկա:***

1) ըղձալի, ընդհանուր, ընչացք
2) ընդունայն, ընկեր, ընչաքաղց
3) ընդսմին, ընդեղեն, ընտրանի
4) ըմպել, ընթերակա, ըմբոշխնել

49 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնք գործածված են փոխաբերական իմաստով:**

*Ճամփան 1.**ոլորուն** դեռ իջնում էր վար՝*
*Դեպի դաշտերի 2.**գիրկը**, ուր չկար*
*3. **Մարդկային** աղմուկ ու երգ ու շառաչ,*
Երազ էր կարծես՝ անապատ դարձած:
*Ու լուռ էր այնպես: Վայրկյանն էր 4. **հոսում**:*
*Ու հին լռության 5. **լաբիրինթոսում***
*6. **Սպասում էին** դաշտ, հովիտ ու քար,*
*Կարծես թե մեկը 7.**այցի** պիտի գար:*

1) 2, 3, 5, 6, 7
2) 1, 3, 4, 6, 7
3) 1, 2, 4, 5
4) 2, 4, 5, 6

50 **Ո՞ր շարքում համանուն *չունեցող* բառ կա:**

1) անձուկ, ափ, թառ
2) խոզուկ, մարտ, գառ
3) հազար, հանդերձ, բազուկ
4) կուռ, կետ, աղոտ

51 **Ո՞ր շարքի բառերից ոչ մեկի արմատին (արմատներից մեկին) *չի* կարող է միանալ -*ատ* վերջածանցը և նոր բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):**

1) գանգամաշկ, նվազագույն
2) կավածեփ, քնաթաթախ
3) ձյունափայլ, արևավառ
4) հոգեառ, կիսամյակ

52 **Ո՞ր հատվածում դարձվածք կա:**

1) Հարցնեի հողից, ջրից, աստղերից,
   Գտնեի կածանն ու դառնայի տուն:
2) Պատահում է՝ սիրտդ լցվում
   Ու չի լալիս ժամանակին,
   Ամպը անձրև է խոստանում
   Ու չի տալիս ժամանակին:
3) Սարը սարից ամպ է խլում,
   Ջուր է խմում ձորը ձորից:
4) Բայց մտքիս մեջ ու երգիս մեջ,
   Ա՜խ, ես ուր էլ գնում,
   Այն աշխարհից մի բեռ կանաչ
   Մանկություն է մնում:

53 **Ո՞ր նախադասության մեջ են ընդգծված բոլոր բառերը դերանուններ:**

1) <u>Ամեն</u> տարիք, ամեն պայման պիտի հերքեմ. Ես ծնվել եմ երգի համար Ու <u>մինչև</u> մահ պիտի երգեմ:
2) Էլ ինչո՞ւ <u>նույն</u> երկինքն է գլխիս <u>վերև,</u> ու ոտքիս տակ՝ նույն կածանը:
3) Ասա՛, մեզ <u>ուրիշ</u> ի՞նչ է հարկավոր, Որ մենք <u>իրարից</u> կարոտ չմնանք:
4) Ինձ թվում է, թե <u>մի քանի</u> անգամ Հերքել եմ արդեն Ես անդարձության օրենքն անողոք, Ապրել եմ այսպես և ապրում եմ <u>դեռ</u>:

54 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:**

1) զվարճացել ենք, խոսում է, զղջացել եք
2) խաղացող, տվեց, զարգացած
3) բազմանում են, պակասած, ուրախացան
4) ծիծաղում եմ, ե՛կ, շողացող

55 **Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

1) Մեզ համարներ տվեցին ու խմբերի բաժանեցին. զույգ թվակիրները մի քանի քայլ առաջ եկան:
2) Տասնյակ ձիավորներից առանձնացավ դրոշակակիրը, որը հանեց գոտուց քարշ ընկած շեփորը և հնչեցրեց:
3) Քսանամյա արքայազնը նստեց բազմոցին, և կրկին ջերմ արտասուքը սկսեց հեղեղի նման թափվել նրա աչքերից:
4) Ոչ հեռավոր անցյալում՝ քառորդ դար առաջ, այստեղ հարթ ու հողածածկ տանիք չուներ միայն հնօրյա գմբեթարդ եկեղեցին:

56 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

1) սպի, գործազուրկ, մարդասեր, աշխատավարձ
2) տեսակետ, օրացույց, նետաձիգ, պատճեն
3) վիրաբույժ, կայսր, նախագահ, անտառահատ
4) երկնաքեր, սեամորթ, շարասյուն, քարտաշ

57 **Ո՞ր տարբերակում է անուղղակի խոսքը ճիշտ փոխակերպված:**

1) *Պալատականն ասաց տիրակալին, որ քանի որ նա իրեն նվեր է ուզում տալ, թող նվիրի մի պարկ ոսկի, որ իր կյանքի մնացած մասը իր կնոջ ու իր երեխաների հետ ապրի առանց կարիքի և նրանից ոչինչ չխնդրի:*
   Պալատականն ասաց տիրակալին.
   - Քանի որ դու ինձ նվեր ես ուզում տալ, նվիրի՛ր մի պարկ ոսկի, որ իմ կյանքի մնացած մասը կնոջս ու երեխաներիս հետ ապրեմ առանց կարիքի և նրանցից ոչինչ չխնդրեմ:
2) *Մայրն ասաց Արմենին, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար, և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ ինքը միանգամայն վստահ է՝ նա հայտնի մարդ է դառնալու:*
   Մայրն ասաց Արմենին և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց.
   - Ես ոչինչ չեմ խնայել քո ուսման համար, միանգամայն վստահ եմ՝ դու հայտնի մարդ ես դառնալու:
3) *Հարուստի ժառանգներն ասացին, որ իրենք գիտեն, թե ինչպես վարվեն իրենց ունեցածի հետ. թող բոլորը գնան, իրենց հանգիստ թողնեն:*
   - Մենք գիտենք, թե ինչպես վարվենք մեր ունեցածի հետ. բոլորդ գնացե՛ք, մեզ հանգի՛ստ թողեք,- ասացին հարուստի ժառանգները:
4) *Տանտերն ինձ պատասխանեց, որ ես ինքս եմ կատակասերը. ինքը երեկ հավատաց իմ փուչ ծառայի խոսքերին, իսկ ես այսօր չեմ ուզում հավատալ իր խոսքերին, և բոլորս իրեն ծաղրում ենք:*
   Տանտերն ինձ պատասխանեց.
   -Դու ինքդ ես կատակասերը. ես երեկ հավատացի իմ փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:

58 **Ո՞ր նախադասության մեջ կապ *չկա:***

1) Խոսքերդ կարկաչող որպես նուրբ մի զգեստ Ստվերում են սրտիդ գաղտնիքները սիրուն:
2) Իտալիայի կառավարությունը հապշտապ դիմեց աշխարհի բոլոր մասնագետներին՝ մասնակցելու աշտարակի փրկության գործին:
3) Եթե զինվորների շողշողուն զենքերը չլինեին, հեռվից դիտողին կթվար, թե քարե դարի մարդիկ են հավաքվել սեղանի շուրջ:
4) Բրոնզաձույլ արձանի՝ բոլոր մարդկանց հետաքրքրող լուրը անմիջապես տարածվեց հելլենիստական աշխարհով մեկ՝ Հռոդոսի ափերը ձգելով բյուրավոր ճամփորդների:

59 **Ո՞ր տարբերակում ցուցական հոդի գործածություն *չկա:***

1) Վերջերս նրան քիչ էի հանդիպում. խուսափում էր ինձնից:
2) Կյանքն անցողիկ է, աշխարհս՝ ունայն:
3) Նվաստս դարձա մատնության գործիք, Եվ ներում չունեմ էլ ես հավիտյան:
4) Օրերս Երևան է ժամանելու նշանավոր երաժիշտը:

60 **Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր կա:**

1) Ախոռի սուր, անախորժ օդը դիպավ Կամսարյանի քթին, բայց այժմ արդեն ժամանակ չկար մտածելու:
2) Փառաշեն տան պատուհանները ողողված են արևի պայծառ շողերով, բայց մետաքսյա կանաչ վարագույրների պատճառով դրանք չեն թափանցում ննջարան:
3) Հետևյալ համարը պատկանում էր մի երիտասարդի. նա նվագեց և արժանացավ բուռն ծափահարությունների:
4) Այդ նպատակով նա հասավ հռչակավոր Հարանց անապատ, ժողովեց այդտեղ կորովի մարդկանց, կազմեց միաբանություն:

61 **Ո՞ր նախադասության մեջ դերբայով արտահայտված որոշիչ *չկա:***

1) Զրուցակիցս բարի ու կամեցող մարդ թվաց ինձ:
2) Գյուղացի կինը շատ լավ էր տարբերում ուտելու սունկը թունավորից:
3) Նա ոչինչ չասաց. պարզ էր, որ իմ հուզված ձայնի մեջ և գունատ դեմքի վրա զգաց ինչ-որ սպառնալիք:
4) Մթամած երկնքում ամպերը գնալով խտանում էին, մինչև որ երկինքը բոլորովին մթնեց:

62 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա. Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին
բ. Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին
գ. Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց
դ. Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց

1) բ, ա, դ, գ
2) դ, ա, գ, բ
3) ա, գ, դ, բ
4) դ, բ, գ, ա

63 **Ո՞ր տարբերակում է նախադասության ընդգծված անդամի պաշտոնը սխալ նշված:**

1) Երբ կհոգնես, կգազազես <u>աշխարհից</u>, Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից: *(անջատման անուղղակի խնդիր)*
2) Ես ու դու էլ շղթայված ենք <u>իրարու</u>, Կարոտավառ երազում ենք միշտ իրար: *(հանգման անուղղակի խնդիր)*
3) Երկնքում անուրջ աստղեր կվառես, Կլցնես հոգիս անուշ <u>երազով</u>: *(ներգործող անուղղակի խնդիր)*
4) <u>Ի՞նչ</u> մնաց ինձ. ոսկյա մի ցանց, ուրիշ ոչինչ: *(ենթակա)*

64 **Ո՞րն է բարդ նախադասություն:**

1) Անծանոթը մոտ քառասուն տարեկան մի տղամարդ էր՝ կանաչ-դեղնագույն դեմքով, նոսր մազերով ու ցանցառ մորուքով:
2) Որսկանի ձեռքից փախած, բայց կարեվեր խոցված՝ եղջերուն վայր էր ընկել:
3) Լռելյայն կարդում էի նրա նամակը, ու իմ՝ անքնությունից կարմրած աչքերից գլոր-գլոր թափվում էր արտասուքը:
4) Եվ ահա ես, ինձ համարելով ճակատագրի խորթ զավակ, գտա իմ բարձրագույն սփոփանքը՝ գիրքը:

65 **Ո՞ր նախադասության մեջ միջակետ *չի* կարող դրվել:**

1) Ազնավուրյանների ընտանիքին օգնություն էր անհրաժեշտ ճգնաժամի հետևանքով նրանց փոքրիկ ռեստորանը փակվել էր և մնացել էին առանց եկամտի որևէ աղբյուրի:
2) Հայրս երկար ժամանակ ուզում էր շրջել Ադիս Աբեբայում չէ՞ որ դեռ պատանեկան տարիների երազանքն էր դա:
3) Տաթևի նշանավոր վանքում Հովհան Որոտնեցու նա նաև նույնանուն համալսարանի հիմնադիրն էր ծավալած գործունեության շնորհիվ միջնադարյան Հայաստանում Տաթևը կրթական խոշոր կենտրոն է դառնում:
4) Կարմիր պառավ ձին սիրտ չէր անում գնալ դեպի քուռակը վախենում էր իր ոտնաձայնի մեջ կորցնի թշնամու թաքուն ձայները:

66 **Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի ո՞ր հերոսն է պոեմի դրվագներից մեկում նկարագրվում հետևյալ կերպ.**

Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր:

1) Սարոն
2) Ծերունին
3) Մոսին
4) Անուշը

67 **Ո՞ր հատվածներում անդեմ նախադասություն կա:**

1. Արդյոք կժպտա՞ս, լուսեղե՛ն երազ:
2. Անուժ ցավի ցուրտ կապար…
   Մահացողի տխուր կյանք.
   Անմխիթա՜ր, անսպա՜ռ
   Վհատության հեկեկանք…
3. Այս ցուրտ երկրի անհայտում անհուն
   Ընկնել, կորչել և ննջել հավետ:
4. Նորից անձրև՜, մշո՜ւշ, ա՜մպ,
   Թախի՜ծ անհուն, տխրա՜նք հեզ:
5. Իմ խաղաղ երեկոն է հիմա՝
   Մեղմալույս, և՛ տխուր, և՛ անուշ:

68 **Նախադասության անդամներից որո՞նց ձևաբանական վերլուծությունն է սխալ:**

Մի վայրկյան թվում է, թե խորհրդավոր այս կերտվածքը իսկույնևեթ լեզու է առնելու և ասելու, որ ինքը տեսել է հզոր փարավոններին, որոնք կառուցեցին վիթխարի բուրգերը:

1. **որոնք** – հարաբերական դերանուն
2. **կառուցեցին** – պատճառական բայ
3. **թվում է** – անկանոն բայ
4. **վայրկյան** – ***վա*** հոլովման գոյական
5. **կերտվածքը** – հարակատար դերբայ
6. **իսկույնևեթ** – մակբայ

69 **Ո՞ր մտքերն են հակասում շարադրանքի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Երկրաշարժի ուժգնությունը չափում են էրգերով: Էրգի մեծությունը հուշում է դրա վտանգավորության չափը:

Մարդկությունը վաղուց է գլուխ կոտրում երկրաշարժը կանխագուշակող կամ գրանցող սարքեր ստեղծելու վրա: Մ.թ.ա. 132 թ. չինացի Չժան Խենը հնարել էր սեյսմոսկոպ՝ բաղկացած զանգից՝ ներսում կախված լեզվակով: Զանգի շրջագծի վրա կային անցքեր, որոնցից դուրս էին գալիս վիշապի գլուխներ. նրանց բերաններում մեկական գնդիկ կար: Հենց երկրաշարժ էր սկսվում, լեզվակը ճոճվում էր, հարվածում գնդիկներից մեկին, որն ընկնում էր ցածում նստած մետաղյա գորտի բերանը: Գնդի հարվածից գորտը սուր ձայն էր հանում՝ ազդարարելով ստորգետնյա ցնցման մասին և ցույց տալով նրա ուղղությունը՝ ըստ նրա, թե որ վիշապի գնդիկն է ընկել: Նույն սարքի գնդիկները 1703 թ. ֆրանսիացի ֆիզիկոս Ժան Օտֆյոն փոխարինեց սնդիկով լի փոքր գուռերով: Մեկ դար անց սարքը համալրվեց իր ռեգիստրն ունեցող պտտվող թմբուկով, որը նշում էր երկրաշարժի տևողությունը: 1888 թվականից սկսեց կիրառվել տրոմոմետրը՝ ճոճանակ՝ ծայրին ասեղով, որը գծեր էր խազում մրոտած թղթին՝ ցույց տալով երկրաշարժի պատկերը: Նման սարքերի հետագա կատարելագործումը թույլ տվեց գրանցել անգամ 0.001 միլիմետրի տատանումները: Սակայն մինչև օրս մարդկությունը չի կարողանում կանխատեսել երկրաշարժի տեղը, ուժգնությունը և ուղղվածությունը այնպիսի ճշգրտությամբ, որ հնարավոր լինի էվակուացնել տվյալ վայրի բնակչությանը մինչև երկրաշարժի սկսվելը:

1. Ժամանակակից սեյսմիկ սարքերը երկրաշարժի ուժգնությունը չափում են միլիմետրերով:
2. Առայժմ չլուծված խնդիր է մնում երկրաշարժի կանխագուշակումը՝ մինչ դրա սկսվելը:
3. Ֆրանսիացի ֆիզիկոս Ժան Օտֆյոն արդի սեյսմոգրաֆի հեղինակն է, որը պտտվող թմբուկ և ասեղ է ներմուծել սարքի մեջ:
4. Երկրաշարժ գրանցող առաջին սեյսմոսկոպը կարողանում էր տեղեկություն տալ միայն ցնցման մասին՝ չորոշելով նրա որևէ այլ հատկանիշ:
5. Երկրաշարժային սարքը Ժան Օտֆյոն համալրեց մի այնպիսի դետալով, որը հնարավորություն տվեց գրանցելու երկրաշարժի պատկերը:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Որոշիչը կարող է արտահայտվել գոյականի ուղղական, բացառական, գործիական հոլովներով:
2. Որոշիչը կարող է արտահայտվել անձնական, ցուցական, որոշյալ, անորոշ դերանուններով:
3. Որոշիչը կարող է արտահայտվել թվականի բոլոր տեսակներով:
4. Որոշիչը կարող է հանդես գալ կապական կառույցով:
5. Որոշիչը կարող է արտահայտվել բոլոր անկախ դերբայներով:
6. Հետադաս որոշիչը միշտ արտահայտվում է մեկից ավելի բառերով: